10507

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 19 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0151-21

Ձեռնարկողը՝ ***«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ***
ՀՀ, ք.Երևան, Եկմալյան 6, սեն.N26

Գործունեությունը՝ ***Կոտայքի մարզի, Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Տարպուի փողոց 1/15

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0151-21

<19> 08 **2021թ.**

«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Կոտայքի մարզի, Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Տարտուի փողոց 1/15

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Կոտայքի մարզի, Աբովյան քաղաքի, Տարտուի փողոց 1/15 հասցեում գտնվող Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի ներկայիս շենքը քանդել և տեղում կառուցել դպրոցկան նոր շենք:

Նախագիծը կատարվել է «ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊ ընկերության կողմից:

Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՍԱԲԾ)՝ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի սեյսմիկ անվտանգությունը և սեյսմիկ տեսակետից կմեծանա անվտանգ դպրոցական շենքերի ծածկույթը:

Դպրոցների սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի (ԴՍԿԲԾ) համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈւՇ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ԴՍԿԲ Ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) համար, որը հանդիսանում է Ծրագրի իրականացնող մարմինը: Այն ներառում է Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման բոլոր փուլերում:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2822147 վկայականը, Կոտայքի մարզի, Աբովյանի համայնքապետի կողմից տրված 15.10.2020թ. N 141 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման, կադաստրային ծածկագիրը՝ 07-002-0086-0002: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.940398 հա, նոր կառուցվող մասնաշենքերի ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 4447.0 ք.մ, բարեկարգման տարածքի մակերեսը՝ 4283 ք.մ, կանաչապատ տարածքի մակերեսը՝ 10670 ք.մ, նախատեսվող աշակերտների թիվը՝ մինչև 1000 աշակերտ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է. 4447մ²):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Նկարագրական մաս. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցը գտնվում է Աբովյան քաղաքի հարավային մասում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք: Դպրոցի ընդհանուր տարածքում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1410÷1412 մետրի սահմաններում (տարբերությունը՝ 2 մ):

Դպրոցի տարածքում ներկայիս գոյություն ունեցող շենքը սեյսմիկ անվտանգության տեսանկյունից գնահատվել է ռիսկային, ինչի արդյունքում քանդման/ապամոնտաժման աշխատանքները նախատեսված են դրանց ամբողջ ծավալում:

Այդ աշխատանքներն ընդգրկելու են.

- գլխավոր մուտքի և մուտքերի հարթակների և աստիճանների ապամոնտաժում,
- միջհարկային սալերի, պատերի և միջնորմերի կազմատում,
- տանիքի ծածկույթների ապամոնտաժում,
- պատուհանի և դռների ապամոնտաժում՝ շեպերի քանդումով,
- շենքի ներսում առկա ինժեներական ենթակառուցվածքների ապամոնտաժում և այլն:

Ներկայիս գոյություն ունեցող դպրոցը գործող է և ապահովված է անհրաժեշտ բոլոր կոմունիկացիաներով (գազամատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում և այլն):

Նախատեսվող գործունեության շրջանակներում կառուցապատման և բարեկարգման բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել դպրոցի ներկայիս տարածքի սահմաններում:

Դպրոցն իր ծավալատարածական և հատակագծային լուծումներով նախատեսված է մեկ ծավալում: Շենքը եռահարկ է՝ 3.3 մ հարկերի բարձրությամբ, բացառությամբ հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի: Ցածրադիր հարթակի առաջին հարկի հատակի ընդունված պայմանական 0.00 նիշը համապատասխանում է 1411.4 բացարձակ նիշին:

Շենքի ծավալահատակագծային լուծման մեջ 0.00 նիշում նախատեսված է 12.0 x 30.0 մ առանցքային չափերի ներքին բակ՝ 18մ երեք վեցական թռիչքային չափերով հասնող արտաքին կապով: Ներքին բակը հարկերում շրջափակված է ռեկրեացիոն տարածքներով՝ բացառությամբ մեկ կողմի, որտեղ հարակից են.

- առաջին հարկում՝ ճաշասրահը,
- երկրորդ հարկում՝ դասասենյակները,
- երրորդ հարկում՝ հանդիսությունների դահլիճը:

Նախատեսված են լուսավորման հորեր, հարկերի բարձրացմանը համապատասխան, տարածքների մեծացումով: Տանիքում ծածկվում են եվրոստանդարտներին համապատասխանող պոլիկարբոնատով:

Հատակագծային մշակումներում հաշվի է առնվել տարբեր հարկերի 1÷4 դասարանների բլոկ-սեկցիաների և 5÷9 դասարանների բլոկ-սեկցիաների տեղադրման պայմանները: Ապահովված է նրանց միմյանցից ֆունկցիոնալ շահագործման մեկուսացվածությունը: Բացառված են տարբեր տարիքային խմբերի ուսումնական բլոկների միջով խաչվող կապերը: Առանձնացված են նախասրահները, ռեկրեացիոն տարածքները, միջանցքները, մուտքերն ու տարհանման ելքերը:

Ուսումնական գործառույթները նախատեսվում է իրականացնել բոլոր երեք հարկերում:

Տարրական դպրոցի (I-IV դասարանցիներ) համար նախատեսված են խաղասենյակ-դասարաններ, ննջարան-խաղասենյակներ, դասարաններ՝ առանձին խմբային պարապմունքների հնարավորությամբ, թուլակազմ երեխաների քնի կազմակերպման հատուկ սենյակներ, աշխատանքի, մոդելավորման, տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի սենյակ, ռեկրեացիոն տարածքներ, մեթոդական կաբինետ-ուսուցչանոց, սանհանգույցներ՝ բոլոր հարկերում:

Միջին դպրոցի (V-IX դասարանցիների) համար նախատեսված են համակողմանի նշանակության ուսումնական կաբինետներ, բնական գիտությունների կաբինետներ, լաբորատորիաներ, մասնագիտացված օտար լեզուների, համակարգչային և հաշվիչ տեխնիկայի դասարաններ, նկարչության և գծագրության կաբինետներ, վարչական նշանակության սենյակներ, բժշկի կաբինետ՝ պրոցեդուրային սենյակով, ատամնաբույժի կաբինետ:

Հանդիսությունների դահլիճը տեղադրված է երրորդ հարկում, ունի 14.4.x24 հատակագծային առանցքային չափեր և մինչև ծածկի կրող կոնստրուկցիան 6.2մ բարձրություն: Այն ներառում է բեմական մասը, դերասանական սենյակները, գույքի պահեստը ը տեխնիկական մասը:

Դպրոցը ունի երկու մարզադահլիճ, մեկը՝ նախատեսված է տարրական դասարանի աշակերտների համար (18x17.2մ առանցքային չափերով), մյուսը՝ 5÷9-րդ դասարանի աշակերտների համար (18x30մ առանցքային չափերով): Կից նախատեսված են մարզագույքի սենք, մարզչի սենյակ, աշակերտների հանդերձարաններ՝ սարքավորված սանհանգույցով և ցնցուղարաններով: Դահլիճն ունի անմիջական կապ նույն հարթության մեջ գտնվող բացօդյա մարզահրապարակի հետ՝ սարքավորված ժամանակակից մարզագույքով:

Նախատեսված են նաև շախմատի դասարան, ռազմագիտության, աշխատանքի ուսուցման դասասենյակներ և գրադարան: Դպրոցը ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին:

Ճաշարանը տեղավորված է 1-ին հարկում՝ արտադրական մասի համար նախատեսված տրանսպորտային մոտեցմամբ առանձնացված տեխնիկական մուտքով: Ճաշասրահն ունի 226 ք.մ մակերես, տարանջատված է երկու խմբերի՝ առանձնացված լվացարաններով: Նախագծում հատուկ ուշադրություն է դարձված արևի նկատմամբ դասասենյակների և ընդհանրապես ամբողջ ուսման սենքերի պատուհանների կողմնորոշման պահանջներին:

Աշակերտական սեղանների աշխատանքային մակերեսներն արևի ուղղակի ճառագայթներից պաշտպանելու համար նախատեսվում են շերտավարագույրներ:

Դպրոցի նոր շենքը կոնստրուկտիվ լուծված է շրջանակա-կապային կարկաս շրջանակային սխեմայով: Այն կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնե կարկասային 40x40սմ հորիզոնական հատույթի ամբողջական պատային կրող համակարգ, որի արտաքին պատերն իրականացվելու են տուֆ քարերով: Կառույցի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է:

Դահլիճների ծածկերի կրող կոնստրուկցիաները նախատեսված են մետաղական պրոֆիլներից պատրաստված սեղանաձև երկլանջ ֆերմաներից: Արտաքին պատերն իրենցից ներկայացնում են պեմզաբլոկների շարվածք, ջերմամեկուսիչ շերտով: Միջնորմերը նախատեսված են 10 և 20 սմ հաստությամբ պեմզաբլոկների շարվածքներից և ալյումինե պրոֆիլներից շրջանակներով ապակուց;

Լուսամուտների շրջանակները նախատեսված են ալյումինե պրոֆիլներից: Խուլ դռները նախատեսված են ՄԴՖ-ից, իսկ ապակեպատ դռների շրջանակները՝ ալյումինե պրոֆիլներից: Տանիքը լանջավոր է՝ արտաքին ջրահեռացմամբ:

Առաջին, երկրորդ և երրորդ հատվածամասերի տանիքների կրող կոնստրուկցիաները նախատեսված են ուղղանկյուն կտրվածքով խողովակների պողպատե պրոֆիլներից: Ծածկույթը նախատեսված է կրկնակի ծալվածքով հարթ ցինկապատ գունավոր թիթեղից: Բոլոր ոչ գունավոր մետաղական կոնստրուկցիաների բաց մակերեսները նախորոք մշակելուց, նախատեսվում է ծածել պաշտպանիչ շերտով՝ կրկնակի ներկման եղանակով:

Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի տարածքի համար «Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից 2018թ. տրված ինժեներաերկրաբանական եզրակացության համաձայն, տեղամասի ինժեներարեկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շինարարության ընթացքում օգտագործվող հիմնական շինանյութերն են.

- պատեր՝ պեմզաբլոկներ, ցեմենտ-ավազի շաղախով սվաղով և ամրանավորված ցանցով, ծեփամածիկի շերտով, ջերմամեկուսացված,
- առաստաղներ՝ գիպսոստվարաթուղթ՝ ծեփամածիկի շերտով,
- տանիք՝ գործարանային ներված պրոֆիլավորված թիթեղներ,
- Ֆասադներ՝ գունավոր ֆասադային ներկ
- հատակներ՝ վինիլային հատակներ:

Շինանյութերն լինելու են սերտիֆիկացված, համապատասխանելու են ՀՀ օրենսդրությամբ գործող ստանդարտներին և ձեռք են բերվելու լիցենզավորված մատակարարների կողմից:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր»-ի պահանջների, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը կազմում է Amax =0.4g:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Դպրոցի շենքը նախատեսվում է ջերմամեկուսացնել համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Աշխատանքային նախագծով շենքում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով նորակառույց դպրոցն ապահովված կլինի նաև արևային ջրատաքացուցիչով: Արևային ջրատաքացուցիչներում ջուրը տաքանալուց հետո իջնում է կաթսայատանը նախատեսված 1000մ³ տարողությամբ բաք և օգտագործվում դպրոցի կարիքների համար: Այն օրերին, երբ արևային ջրատաքացուցիչները լրիվ չեն հացնում

տաքացնել ջուրը, վերջինս տաքացվում է նաև կաթսայատանը նախատեսված արագընթաց ջրատաքացուցիչներով: Տաք ջրի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով կաթսայատանը նախատեսված են էլեկտրոնային սարքեր, որոնք կարգավում են արևային ջրատաքացուցիչների փոխարինումը արագընթաց ջրատաքացուցիչներով և հակառակը:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր:

Դպրոցը ներկայումս գործող է, հետևապես ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով: Ինժեներական կոմունիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ: Շինարարության և շահագործման փուլերում դրանց ապահովումը կիրականացվի համաձայն ձեռք բերված նոր տեխնիկական պայմանների, ինչպես նաև նախկինում գոյություն ունեցող պայմանագրերի (գազամատակարարման համար նոր տեխնիկական պայմանի ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջացել):

Նոր կառուցվող դպրոցի շենքը ապահովված է լինելու տաք և սառը ջրամատակարարմամբ: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը նախատեսվում է միանցնել արդեն գոյություն ունեցող արտաքին ցանցերին՝ համաձայն 08.09.2020թ. «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված N ԱՄ3051/2020 տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարման համակարգի նախագծի համաձայն, նախատեսված են միացումներ կաթսայատանը, շենքին և հակահրդեհային հիդրանտներին: Նախկին գործող ջրագծից օգտվելու համար նախատեսվում է իրականացնել այդ ջրագծի վերակառուցման աշխատանքներ ևս:

Կառուցվող դպրոցի ջրագծի մուտքագծի վրա, փողոցում միացման տեղում նախատեսված է ջրաչափական հանգույցով դիտահոր: Դպրոցի արտաքին տարածքում նախատեսված են հակահրդեհային դիտահորեր՝ հիդրանտով, համաձայն գործող նորմերի: Նախագծային ջրագծի խողովակի նյութը նախատեսված է պոլիէթիլենային, իսկ դիտահորերը հավաքովի ե/բ էլեմենտներից:

Հակահրդեհային ցանցը նախագծված է օղակային՝ երկու մուտքագծով: Կանգնակները օղակային սնուցող ցանցին միացվելու են թուջե սողնակների միջոցով:

Տաք ջրի պատրաստումը կատարվում է կաթսայատանը: Տաք և շրջանառու ջրագծերը դեպի շենք մոնտաժվում են այդ նպատակով նախատեսված բետոնե առվակների մեջ: Խողովակներն ընտված են պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Փ15÷Փ40մմ, ինչպես նաև մետաղական խողովակներ՝ Փ50 և Փ75 մմ տրմագծերով:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսված է ինքնահոս: Թողարկների միջոցով ինքնահոս եղանակով դուրս բերվող կոյուղին նախատեսվում է միացնել Տարտուի փողոցի գործող Փ300մմ կոյուղագծին: Խողովակները ընտրված են պոլիվինիլքլորիդային՝ Փ50÷Փ100մմ, իսկ դիտահորերը ե/բ հավաքովի էլեմենտներից:

Արտաքին հրդեհաշիջման համար դպրոցի տարածքում հակահրդեհային հիդրանտներ նախատեսված չեն, քանի որ փողոցի ջրագծի վրա հակահրդեհային հիդրանտներ նախատեսված են, որոնք համապատասխանիմ են գործող նորմատիվ բոլոր պահանջներին:

Ներքին հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը, համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմների, կազմում է երկու շիթ (2x2.5լ/վ): Ներքին հրդեհաշիջման կանգնակների վրա նախատեսված են հրդեհային ծորակներ:

Տարածքի անձրևաջրահեռացումը կատարվում է ազատ հոսքով՝ դեպի կանաչ տարածքներ և մակերևութային ջրահեռացում՝ դեպի Տարտու փողոց:

Դպրոցական համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվել է շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Դպրոցի էլեկտրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից АВБбШв-1 տիպի սնող մալուխներով: Նախագծով նախատեսված է աշխատանքային, հերթապահ և էվակուացիոն լուսավորություն:

Բաշխիչ կետից մալուխները մետաղական վաքերով և մալուխային հորանով մոնտաժվելու են դեպի շինության տարբեր հարկերում տեղադրված բաշխիչ վահաններ: Հարկերում տեղադրված սարքավորումները սնվելու են համապատասխան հարկում տեղադրված բաշխիչ վահանակներից:

Լուսավորության համար նախատեսվում է կիրառել փոքր հզորությամբ և բարձր աստիճանի լուսատվությամբ լուսատուներ (էներգախնայող LED տիպի լուսատուներ): Էվակուացիոն լուսատուներն ընտրված են «Exit» նշանով, ելքի սխեմայով և մարտկոցով:

Սենյակներում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում:

Նախագծով նախատեսված է նաև տարածքի արտաքին լուսավորություն, գոյություն ունեցող ենթակայանից տեղակայելով ժամանակի ռելե՝ 3.5 մետրանոց հենասյուների օգտագործմամբ:

Մարզադահլիճի դրսի պատին 7մ բարձրությամբ կտեղակայվեն լուսարձակներ՝ ֆուտբոլի դաշտի լուսավորությունն ապահովելու համար:

Բաշխիչ կետերի համար գազոններում նախատեսվու է ստեղծել հողանցման օջախներ ըստ գլխավոր հատակագծի, որը միացվելու է բաշխիչ կետերին շերտավոր պողպատի միջոցով:

Հողանցման դիմադրության մեծությունը պետք է լինի 4 Օհմից պակաս:

Դպրոցի գազամատարարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գոյություն ունեցող դպրոցի կարիքները:

Դպրոցի ջեռուցման, ինչպես նաև օդափոխման համակարգերի ջերմամատակարարումը նախատեսվում է իրականացնել դպրոցի նորակառույց կաթսայատան միջոցով, որի նախագիծն իրականացվել է СНиП II-35-76 պահանջների համաձայն:

Ջեռուցման ապահովման նպատակով կկառուցվի մոտ 18մ² մակերեսով (4.3x4.2մ) կաթսայատուն, որի կրող կոնստրուկցիան ե/բ կմախքն է:

Ջեռուցման ցանցի նախագիծը կատարվել է համաձայն 2.04.07-86 շինարարական նորմերի և կանոնների: Կաթսայատան սարքավորումները ընտրվել են հաշվի առնելով կառուցվող շինության ջերմային պահանջները: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսա՝ յուրաքանչյուրը 420 կՎտ ջերմային հզորությամբ, որոնք կկազմեն ընդհանուր ջերմային պահանջի 60%-ը: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով: Ջեռուցման համար ջերմության հաշվարկային ծախը կազմում է 707000կկալ/ժամ:

Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը, որը կաթսաների այրիչներին մատակարարվելու է արտաքին ցանցից: Ջերմատարը հանդիսանում է ջուրը՝ 80÷60°C ջերմաստիճանային էջքով:

Կաթսայատան գազասպառման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով կտեղադրվի այրվող գազերի ազդանշանային սարք: Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում դեդեկտորը տալիս է լույսաձայնային ազդանշան, որի դեպքում էլ. մագնիսական կափույրը դադարեցնում է գազի մատակարարումը դեպի գազասպառման սարք:

Կաթսաներն ունեն ցածր աերոդինամիկ դիմադրություն, ուստի վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի քարշը բնական է:

Վառելիքի այրման համար օդը այրիչների համար վերցնում են կաթսայատան սրահից, որն այնտեղ մուտք է գործում դռան և պատուհանի վրա նախատեսված ճաղաշարերից:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի 2 ծխատարների միջոցով, որոնք համապատասխանում է СНиП 2.04.05-91 պահանջներին,և նրանցից յուրաքանյուրն ունի 250մմ տրամագիծ և 6 մ բարձրություն:

Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները (C_{NO2}=0.03 մգ/մ^3, C_{CO}=0.006 մգ/մ^3) գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի: Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն

Դասասենյակների համար նախատեսված են ներածման համակարգեր, որոնք ապահովում են մաքուր օդի ներածումը դասասենյակներ, իսկ միջանցքներում նախատեսված են արտածման համակարգեր, որոնց միջոցով կատարվում է օդի արտածումը: Առանձին ներածման-արտածման համակարգեր են նախատեսված խոհանոցի, ճաշասրահի, հանդիսությունների սրահի, ֆիզկուլտուրայի դահլիճի, տնօրենի կաբինետի, քիմիայի կաբինետների, թուլակազմ երեխաների քնի կազմակերպման սենյակների, երգ-երաժշտության և պարի խմբակների համար:

Սանհանգույցներից օդը հեռացվում է մեխանիկական՝ կանալային օդամուղների միջոցով:

Նախագծով նախատեսված է աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել, ինչն իր մեջ ներառում է ռեկրեացիոն գոտիներն ու ներքին բակը:

Կանաչապատման աշխատանքներում կօգտագործվի շինարարական աշխատանքների ընթացքում նախօրոք հանված (հզորությունը՝ 15սմ) և պահեստավորված հողաբուսաշերտը՝ 287.64 մ^3 ծավալով:

Դպրոցի կառուցապատման տարածքում առկա թվով 13 դեկորատիվ ծառերից 6-ը կվետատնկվեն կանաչապատ գոտում, իսկ 7-ը կհատվեն, քանի որ դրանք ընկնում են կառուցապատման տակ և դրանց վերատնկումը նպատակահարմար չէ:

Աբովյանի համայանքապետարանը տեղյակ է ծառերի հատման վերաբերյալ և դրա հետ կապված առարկություններ չունի, առավել ևս որ նախագծով որպես փոխհատուցման միջոոցառումներ, նախատեսված են լրացուցիչ ծառատնկման աշխատանքներ՝ մի շարք ծառատեսակների համադրմամբ: Համապատասխան տեղեկանքի ձեռք բերումն ընթացքի մեջ է և այն նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Բուն կանաչապատման աշխատանքները նախատեսվում է իրակաացնել 10670 ք.մ տարածքում: Կանաչապատման աշխատանքների արդյունքում նախատեսվում է կանաչապատ գոտին իրականացնել սիզմարգերի (1917.6մ^2) և տարբեր ծառատեսակների համադրությամբ:

Դպրոցի տարածքում նախատեսվում են հետյալ ծառատեսակները.

- կատալպա՝ 11 հատ,
- հուդայածառ՝ 12 հատ,
- եղևնի արծաթափայլ՝ 7 հատ:

Կանաչապատման համար կիրառվող ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները: Ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

Նախագծով նախատեսված է կանաչապատ տարածքի ոռոգում, որի համար որպես ոռոգման ջրի աղբյուր ծառայում է քաղաքային ոռոգման ցանցը, որն անցնում է Տարոու փողոցով (DN 100մմ տրամագծով պողպատե խողովակ): Ոռոգումը նախատեսվում է իրականացնել ճկափողերի օգտագործմամբ:

Բարեկարգման և կանաչապատման միջոցառումները կիրականացվեն բարեկարգման և կանաչապատման պլաններին համապատասխան, որոնք ներկայացվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա դպրոցի կառուցման ընթացքում, կենցաղային և շինարարական աղբն է:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահոված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3100 կգ, կտեղափոխվի աղբահավաք ծառայութուն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) և իրենցից ներկայացնում են շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ (9120060101004), շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը:

Դպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 5907.53մ³, որից 1666.84 մ³ հետագայում կօգտագործվի լիցքի, 355.69 մ³ ետլիցքի համար, իսկ 287.64 մ³ որպես հողաբուսաշերտ կպահպանվի և հետագայում կվերաօգտագործվի կանաչապատման աշխատանքների ժամանակ: Մնացած 3597.36 մ³ ծավալը նախատեսվում է տեղափոխվել տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված աղբավայր, որի վերաբերյալ տեղեկանքը Աբովյանի քաղաքապետարանից նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 31 ամիս , որից 3 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման/քանդման աշխատանքերի համար:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 33 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ,
- բանվորներ և արհեստագործներ՝ 20 մարդ,
- մեքենավարներ և օգնականներ՝ 8 մարդ,
- այլ աշխատողներ՝ 2 մարդ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակի ազատ տարածքները:

Առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ պահակատուն, գրասենյակ, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, ճաշարան, ինչպես նաև պահեստներ, բիոզուգարաններ, աղբի տարրաներ և այլն: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վաձակալել այլ կազմակերպություններից:

Շինարարության **նախապատրաստական փուլում** իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով,
- գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում:

Շինարարության **հիմնական փուլում** իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- քանդման/ապամոնտաժման աշխատանքեր, որոնք կիրականացվեն խստագույնս պահպանելով ՇՆևԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» կանոնները,
- շինարարական/մոնտաժման աշխատանքներ, որի ժամանակ կիրականացվի դպրոցի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից, որը իրականացվելու է հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Աբովյան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն պետք է ունենա չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը,
- առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը,
- բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը՝ շարվածքի համար, նախատեսվում է ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով առաքել անմիջապես շինհրապարակ,
- հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար: Ըստ նախնական հաշվարկների ջրցանի համար ջրի ընդհանուր ծախսը կկազմի՝ 880.5 մ^3, իսկ շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների ջրապահանջը շինարարության ողջ ժամանակահատվածի համար կկազմի՝ 554.2 մ^3:

Որպես կանոն, իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարման ցանցը, իսկ շինհրապարակի համար կապալառուի կողմից նախագծվում և կառուցվում է մեկ համակարգային ժամանակավոր ջրամատակարարման ցանց, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժումը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա:

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է հետևել անվտանգության նախազգուշական միջոցառումներին, որը ներկայացված է նախնական գնահատման հայտում:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի կողմից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Աբովյանի համայնքապետարանի համաձայնեցմանը,
- կանաչապատման աշխատանքներում կօգտագործվի շինարարական աշխատանքների ընթացքում նախօրոք հանված և պահեստավորված հողաբուսաշերտը՝ 287.64 մ³ ծավալով,
- շահագործման փուլում կանաչապատ տարածքների ոռոգման նպատակով ջրի աղբյուր նախատեսվում է քաղաքային ոռոգման ցանցը, որն անցնում է ք. Աբովյանի, Տարտու փողոցով (DN 100մմ տրամագծով պողպատե խողովակ),
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերումներ:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:
2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

3. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ:
4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի գոյություն ունեցող և նոր տնկված ծառերի աճի, խնամքի համար:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների գումարային ծախսերը գնահատվում են 30 մլն. ՀՀ դրամ, որը ներառում է նաև մշտադիտարկման, ջրցանման, կանաչապատման և աղբահեռացման ծախսերը:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի, Աբովյանի համայնքապետարանի շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի», նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Կոտայքի մարզպետարանից» ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Աբովյանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ դպրոցի շենքի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության:
7. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կոտայքի մարզի, Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վ. Վարդանյան

Ընդամենը՝ 12 էջ